


ՊԱՅՄԱՆՔ

Յարձական գինն է՝ Պոլսոյ հմր. 10 Մճ.
Պոլսոյ հմր. 2 լիրա
Վերջումն է՝ Պոլսոյ հմր. 3 Մճ.
Պոլսոյ հմր. 1 լիրա
Օտար երկիրներու հմր. 50 ճր.
Մանուկան տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զրուշ է՝ աւելի անգամներու
համար զատ ստիպարկութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱԾԱԴԱՐԱՆ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՌԱՆԴԱՆՈՒԹՅԱՆ 10 ՆՈՅԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Երկրակաճ խնդիրը Բ. Դրան ու-
շագրութիւնը գրաւած է միշտ, սա-
կայն տակաւին լուծման եղանակը
չհրատարակեցաւ : Անցեալ օր կ'ըս-
ուէր թէ արդէն Ղալաթիոյ սեղա-
նաւորաց հետ համաձայնութիւն գո-
յացած է, և դեռապանաց հաւանու-
թիւնն ընդունելու համար քանի մ'օր
յետո՞ւն գաւազ : Պայմանագիրը կըն-
քուելէ ետեւ՝ Եւրոպացի արժեթղթա-
տէրերէն փոխանորդներ պիտի ուղ-
ուին, և եթէ չըլլան, պայմանա-
գիրն հոս Ղալաթիոյ սեղանաւորաց
ձեռքը պիտի գործադրի եղեր :

Աւաղբուծեան արժանի կէտ մը
կայ, որ Թուրքիոյ երկրակաճ լարին
արդէն մեծած լինելով Եւրոպիոյ
մէջ, Ղալաթիոյ սեղանաւորները կա-
րող պիտի կրնան լինիլ զայն վերջ-
տին կենդանացնել : Ասոնց շատերը
կ'Պոլսոյ մէջ անգամ մեծ համարում
մը չեն փայլեցնել, իսկ Եւրոպիոյ մէջ ի-
րենց համարումն առաւել ևս կ'աւ-
կածելի է : Գուցէ բացառութիւններ
լինին, սակայն բացառութիւնն օ-
րէնք չէ : Ուստի կրնայ վախճուիլ որ
եթէ դեռապաններէն ոմանք հաւա-
նութիւնաւ տան ներկայ պայմանագ-
րին, Եւրոպացի արժեթղթատեարք
այդուհի և բողոքներ հանեն, որք
կրնան թօքվիլի հռչակաւոր ծրագ-
րին նման ներկայ ծրագրին գործադ-
րութիւնն արգելու : Եւրոպացի ար-
ժեթղթատեարք համարառութիւն
ու ապահովութիւն կը պահանջեն,
և քանի որ այս էական կէտերը պակ-
սին, գործը մեծ գոյաւորութեանց
կը հանդիպի : Քիչապէս պիտի հաս-
տատուի այս համարառութիւնն ու
ապահովութիւնն : Եւրոպացիին հար-
կաւ միջադէպին եղանակ մը կ'ընտ-
րէ, ինչպէս որոշուած էր Վիեննայի
դաշինքի մէջ, որպէս զի տէրութեանց
ձեռքը չ'ընդունան, թէպէտ և
եղբայրական վերջն այս եղանակին
վրայ ալ փաստաւորութիւնը տկարացու-
ցած է :

Իսկ Բ. Դրան այս եղանակը մեր-
ժած է և կը մերժէ, իբր իւր ելմը
տակաճ անկախութեան հակառակ :
Ուրիշ կէտ մ'ալ ոչինչ նուազ ուշադ-
րութեան արժանի է : պարտաւէր-
ներն այնչափ շատ են, և իրենց գը-
րաւ արուած եկամուտներն այնչափ
բազմաթիւ, որ երկրակաճութեան
ինչեկամուտներն արժեթղթատեարք
յատկացան, անդին երեւոյն պար-
տուց տէրերն ալ իրենց առնելիքին
ուղղակի գրաւ ունենալով զաննք,
կը բողոքեն, և փոխադարձաբար :
Ուրիշ օրինակ մը : Կառավարութիւն

նը մաքսերն իւր պիտոյնց համար
վերապահել կուզէ, սակայն 1838,
62 և 77ի փոխառութեանց տէրերն
արդէն զաննք գրաւ առած լինե-
լով, չ'պիտի ուզեն թողուլ որ ուրիշ
նպատակի սահմանուին, և պիտի բո-
ղոքեն :

Առնելիքի տէրերն այսպէս իրենց
փոխադարձ իրաւունքները պաշտպա-
նելով՝ ծրագրի մը յայտարարեան ար-
գելք կը հանեն : Իսկ իրենք իրենց
մէջ չեն կրնար համաձայնիլ և ծրա-
գիր մը ներկայել, քանզի զանազան
աղբուծիւններու բաժնուած են,
կամ եթէ համաձայնին և ծրագրի մը
ներկայեն, Բ. Դրան գործին չ'գար :
Այսպէս երկրակաճ խնդիրն առ այժմ
անլուծ կը մնայ : Տէրութիւնը աւելի
քաղաքական խնդիրներով կ'ընդգրկուի,
և իրենց հոգը չէ բնաւ թէ սեղա-
նաւորներուն և Պոլսոյ շահագէտնե-
րուն ստեղծած թուղթերն ինչ կը լի-
նին : Եթէ յարմար առիթ մը գտնեն,
հարկաւ այս խնդիրն ալ լուծել կու-
զեն : սակայն քանի որ գոյաւորու-
թիւնները մեծ են և իրենց տուած
խորհուրդներն անընդունելի կը մնան,
չեն ուզեր աւելի յառաջ ելլել, և
գործերն իրենց ընթացքին կը թո-
ղուին, թերեւ փաստ լինելով որ ժա-
մանակն ինքնին այս խնդիրը պիտի
լուծէ օր մը : Առ այժմ անստուգու-
թիւնը կ'ընտրէ, և Եւրոպիոյ հա-
պարակները կարծես իրենց անփաստ
հոլթիւնը ցուցնելու համար՝ արժե-
թղթոց անկմամբ կը պատասխանեն :

ԿԱՌԱՆԴԱՆՈՒԹՅԱՆ

Ինչպէս կը յիշուի, մեր երկու-
շագրութիւնը թուոյն մէջ Եւրոպա-
կան լրագրերէ քաղելով քանի մը տե-
ղեկութիւններ տուած էինք կարսի
գործին վրայ : Մանգուլիէի Էֆենդի
իւր երէկուան թուոյն մէջ յօդուած
մը հրատարակելով՝ այդ տեղեկու-
թիւնները կը խմբէ : Մեր յարգոյ
պաշտօնակիցը կը պնդէ թէ Ռուսիոյ
մէջ, որ իւր նկարագրած ինչայնով
կանոնաւորութեան ու բարեկարգու-
թեան կողմէ գրաւում է, այդպիսի
գէտքեր չեն կրնար պատահիլ : Թէ
հարկաւ մեծ պատճառ մը պէտք է
լինի Հայոց դպրոցներուն ու եկեղեց-
եաց փակման, զոր տեղւոյն Հայերը
կը ծածկեն, որովհետեւ աննպաստ է
իրենց համար : Թէ կարսի կառավա-
րին յիմար պէտք էր լինէր իրեն
ընծայուած ընթացքը բռնելու հա-
մար, բայց յիմար չէ : Թէ Եւրոպա-
կան լրագիրը այդ տեղեկութեանց
մէջ սխալած պէտք է լինին, և թէ,
վերջապէս, կարսի գէտքերն վրայ այդ-
պիսի տեղեկութիւններ հրատարա-
կող աղբային լրագիրը առանց դա-
տողութեան գործած են :

Մեր պատասխանը պարզ է : Մեր

այդ տեղեկութիւնները թայմէն քա-
ղած էինք, որ նա ալ Օտէսայէն և
Բեդրսպուրիէն առած էր : Թայմի
լրագրին այդ երկու քաղաքաց մէջ
ունեցած թղթակիցներն ալ մասամբ
իրենց առած տեղեկութեանց և գը-
լաւորապէս կողմ լրագրին յենելով,
որ թղթակից մ'ունին ի կարս, այդ
տեղեկութիւններն հեռագրած էին
ի Լոնտոն : Մեր քաղաքացի կամ
բողոքները Հալապի հեռագիր մը,
զոր փարսի լրագրաց մէջ տեսած
էինք :

Արդ, երբ կարսէն դուրս տե-
ղեկութիւն չ'առնուի գործին վրայ,
և երբ մեք ինչպէս մեր բոլոր պաշ-
տօնակիցները՝ պէտք եղած միջոց-
ները չունինք գործին վրայ մեր կողմէ
տեղեկութիւն հրատարակելու, իբ-
րեւ ժամանակագիր մեր պարտքն
էր հրատարակել Եւրոպական լը-
րագրաց տուած տեղեկութիւննե-
րը, մանաւանդ որ նոյն իսկ կարսէն
առնուած էին :

Իրաց այս վիճակին մէջ, Մանգու-
լիէի Էֆենդի արդ տեղեկութիւններ
ըն Մասիսէն քաղելով և իւր խօսքը
Մասիսի ուղղելով՝ կ'ապացուցանէ
թէ Եւրոպական և մանաւանդ Անգ-
ղիական մամուլն մէջ մեր աղբիւն գոր-
ծոց վրայ եղած հրատարակութիւն-
ներն անձանթ են իրեն :

Պէտք չունինք Մանգուլիէի խմբ-
քաղութեան եղանակը քննելու :
Բայց յայտնի է որ երբ Աղլը ծանրա-
պէս զբաղեցնող նիւթի մը վրայ թայ-
միցի և կոյսի նման լրագիրը իրենց
տեղեկութեան սովորական աղբիւր-
ներէն քաղելով հրատարակութիւն-
ներ կ'ընեն, Հայ լրագիր մը պատ-
ճառ չունի իրրեւ տեղեկութիւն չը
յիշել զաննք, աւելի ստույգ և աւե-
րի ընդարձակ տեղեկութիւններ յե-
տոյ հրատարակելու պայմանաւ, երբ
առիթ ունենայ :

Հետեւաբար մեր յարգոյ պաշտո-
նակիցն իրաւունք չունի իւր խօսքը
Մասիսի ուղղելու, քանի որ նա ինք-
նին բան մը չէ հնարած, ոչ ալ
յիշեալ տեղեկութեանց աղբային լը-
րագրաց մէջ հրատարակուելէ զան-
գատելու, քանի որ լրագրութեան
օրինաց կատարելապէս համաձայն կը
վարուէին :

Իսկ զայնով այն կէտին՝ թէ ա-
ռանց պատճառի գործ չ'կրնար լինիլ,
թէ կարսի Հայք բուն պատճառը կը
ծածկեն և այլն, այդ մասին կրնամք
քանի մը տեղեկութիւններ տալ մեր
յարգոյ պաշտօնակիցին : Ամենէն ա-
ռաջ՝ հինգ տարու տոյս մ'անգամ
կրնայ ըմբռնել թէ կարսի դպրոցնե-
րն և Անիի եկեղեցիներ փակուելու հա-
մար իրական և մեծ պատճառ մը
չկար, ըստ որում քանի մը շարժմ
յետոյ Ռուսական կառավարութեան

կողմէ կարսի իշխանութեանց տըր-
ուած հրամանաց համեմատ՝ նորա
վերստին բացուեցան : Երկրորդ,
յայտնի է թէ կարսի Հայ դպրոցաց
գէտ՝ ամբաստանութիւն կար թէ ա-
ռանց արտօնութեան բացում էին, և
թէ՝ միւս կողմէն՝ կարսի կառավա-
րին այդ դպրոցաց միոյն մէջ եղած
հարց էր : Ասոնց վրայ յարելով Ֆը-
րանքիի զօրավարին միջնորդու-
թիւնը, զոր Եւրոպական լրագիրը
անգամ կը հաստատեն, կարսի գը-
րոցաց փակման համար կունենալը
թէ և ոչ պատճառ մը՝ գոնէ պատ-
րուակ մը, այնպէս որ Թան լրագրի
իրաւունք կունենայ ըսելու թէ այդ
դպրոցները « չնչին պատճառաւ մը »
(Էֆենդի) փակուած էին :

Իսկ երբ խնդիրը ֆրանքիի զօ-
րավարին ընթացքը պարտաւէրու վը-
րայ լինի, յարմէ Մանգուլիէ չ'ընէ հա-
կընար ինչպիսի արտառուց մտածմամբ
վրացած կը թուի, կը յուսամք որ
մեր յարգոյ պաշտօնակիցը կը ներէ-
մեզ եթէ ինչեցեւոր իրեն թէ մեծ
սխալ մը կը գործէ : Միայն Հայ լը-
րագիրը չէին որ ֆրանքիի զօրավա-
րին ընթացքը պարտաւէրին և կար-
սի գործն անոր քանահաճութեան մի-
այն ընծայեցին :

Ռուսական մամուլն՝ ինչպէս կը
տեսնենք Անգղիական լրագրաց մէջ,
միաձայնութեամբ դատաւարտած է
այդ զօրավարին ընթացքն և Հայոց
համար անմիջական հատուցում պա-
հանած, և մինչև որ այդ հատու-
ցումը չէ տրուած դպրոցաց և եկե-
ղեցեաց բացմամբ, Ռուսական մա-
մուլը գոհ չէ եղած : Անգղիական
թղթակիցը հեղհեղհեղ հեռագրաց
մէջ քննադատեցին ու պարտաւէրին
կարսի կառավարին ձեռք առած
միջոցն, Անգղիական լրագիրը խմբ-
քաղական յօդուածներ գրեցին և
փարսիի գլխաւոր լրագիրը խմբութե-
ղու գործածեցին ֆրանքիի զօրա-
վարին դէմ, որուն Թան խորհուրդ-
տուաւ, որ Գերմանիա ընելիք ուղե-
րութեան օգուտ քաղելով՝ Եւրոպիոյ
մէջ իւր վարչական ուսումն ամբող-
ջացնէ : Իրաց այս վիճակին մէջ զար-
մանալի է որ Հայ լրագիր մը կենէ և
այդպիսի կառավարչի մ'ընթացքը
պարտաւէր իւր պաշտօնակիցները կը
մեղադրէ : . . .

Ռուսի տուանց մեր խօսքն աւելի
երկարելու՝ մեր յարգոյ պաշտօնակ-
ցին մեզ տուած խրատն իրեն կը
վերադարձնենք խորհուրդ տալով
իրեն որ իւր յօդուածները քիչ մ'ա-
ւելի դատողութեամբ և տրամա-
բանութեամբ գրէ, և խմբածքն չը-
նէ այնպիսի նիւթերու վրայ, որոց
նկատմամբ այդ թերեւ իրմէն աւե-
րի տեղեկութիւն ունին :

բաւ 10, Հարբէնց 35, Յաւաւ 10, Ռաւաւ 12, Չիւր 10, Ռիւղ 24 և թացու. 40 տուն գոտ Հայ բնակչօք. Ռիւղէն և թացուէն ի զատ որ Եղեւ գինէն 1 1/2 ժամ հեռու են, միւս տունն գիւղերու Եղեւ գինէն ունեցած հեռաւորութիւնը կէս ժամէն մինչև 1 ժամ է միայն: Եղեւ գիւղի ունի երկու եկեղեցի և երեք քահանայ. աւագերէց Տ. Պողոս քահանայն վերայիշեալ գիւղերուն Աղծմարի կաթողիկոսութեան գործակաւորն է, ինչպէս նաև Եղեւ գիւղի Ռէսը միանգամայն Մեկիք է վերողբեալ գիւղերուն, որք իրենց զատ գոտ Ռէսերը ունին գարձեալ:

Եղեւ գիւղի դպրոց ունեցած չէ երբէք, և ասոր համար երբ տեղւոյ մասնաճիւղի կողմէն խիզան զրկուած ճեղկաբեր մասնաժողովը՝ նոցա գիւղին մէջը դպրոց բանալու համար հարկ եղած տեղեկութիւններն ստաւ նախա հետամուտ կը լինի, գիւղացիք շատ կը համարին նոցա և անմիջապէս դպրոց լինելու յարմար հինգ չէնքերը ցոյց կուտան: Եղեւ գիւղի և շրջակայ գիւղերու ուսանողաց թիւը մինչ 200 կը հասնի և Եղեւ գիւղի մէջը դպրոց բացուած ժամանակ շրջակայ գիւղերէն անդ աւշակերանքը զրկելու և ուսանողաց թիւը 100-150 հասնելու խիստ անպահապարհութիւն կայ:

Բ. Օրականքոց ամենէն կարեւորը հացի խնդիրն է, զի սղութիւնը սովի կերպարանք առնուլ սկսեց: Հացի չափը 18 դահեկանէն 110 դահեկանի բարձրացած է, և այն ալ չը գտնուիր: Փոռուքէն շատերը արդէն գոցուած են և բոց եղած փռուները շուկայի անձանց կէսօրեայ ճաշին բաւականապէս չափ իսկ հաց չեն կարող մատակարարել, և երկու ժամ փռուերու առջև օպատոյ մը հազիւ կը կարողանայ մի հաց ձեռք բերել: Արեւն կանցնի օրտէս՝ երբ կը մտածեմ հազարաւոր սղութեալ, անօթի ընտանեաց գաւառ մի՞ճակը՝ շատ ընտանիքներ կը ճանչնամ, որք աւնօթութեան պատճառաւ ամենքն ալ հիւսնոք պառկած են անխնամ և անդարձման: Հաց չկայ, որպէս զի բժիշկը գարմանէ դիւրեւք. հարկաւորաւոր ընտանիքներ կան՝ որոց արդաները անօթի են, կուրան, հաց կուղեն, մայրերը քանի մը հատ միտք կուտան նոցա ձեռքը և անօթի կը պառկեցնեն: Ընթերցող, և բնակայէ ընտանիք մը, որոյ անդամները կը կազմեն մի մայր և հինգ վեց մանր տղաներ. մայրը այս տեղի կանանց մի միակ դործը եղող ճախարակով կտուի համար թեւ մանելով վեց-եօթը անդամներէ բաղկացեալ ընտանիք մը պիտի շահէ, մի շարքով աւել մէջը հազիւ կրնայ մանեկէն քաշ թել և վարձքը կտուանոյ 1/4 քաշ բամբակ, որ կարծէ հինգ դահեկան. ահ, Աստուած իմ հինգ դահեկանը նորա մէկ օրուան պարէնն իսկ չը հաւար. այսպիսի ընտանիքները, ձմեռը երբ սովին աւելի սաստկանալու երկիւղներ կան, անօթի պիտի մեռնին անշուշտ:

Կառավարութիւնը պատերազմի ժամանակ ժողովուրդէն հաւաքած հարկերէն թաշը, որոց ստակը վերադարձ չէ տակաւին, մէկ դահեկան

ողջ դրամով վաճառեց, աղքատները մինչ ցայսօր այն հարկերէն կը գնէին, և ասոր համար մի ժամանակ հացի գինը 80-85 դահեկանէն աւելի չը բարձրացաւ. իսկ այժմ հարկերէն սպառած լինելը պատճառաւ հացի գինն չափէն աւելի բարձրանալուն, և եթէ այսպէս շարունակուի՝ կը վախճուի որ սղակայի սովի մը փոխուի ներկայ սղութիւնը: Կառավարութեան ամբարներուն մէջը անթիւ ցորեան կայ, զորս եթէ հրապարակ լեցնելով ծախէ, իսկապէս կը հաւատացուի որ հացի գինը շատ պիտի իջնայ. սակայն կառավարութիւնը, որոյ անուանական պաշտօնէնց հողը չէ սովալուր ժողովուրդի հեծեմանքը, հակառակ բաւանքի ժողովուրդական տղերսաւ գիւղերու՝ տակաւին կառավարութեան ցորեանները տարարած է և կառավարութեան շահույց ներդաւոր պաշտօնէնց փայլն է թէ ժողովուրդը սովաւանջութենէ կը մեռնի: Ընդհակառակն նոքա կը փափաքին որ սովը աւելի սաստկանայ, որպէս զի կառավարութեան ցորեանները աւելի ուղղ ծախելով՝ իրենք շահին: Հաստատ տղերքներէ կտու գուր թէ երբ քանի մը պաշտօնական անձինք սղութեան աղետաբեր հետեւանքը կուսակալին բացատրելով, նորա առաջին առնելու մի միակ ճարը՝ կառավարութեան ցորեանները ծախել կառավարին, կուսակալը «կառավարութեան ցորեանները չը պիտի ծախուին, կը պատախանէ, քանի որ հացի չափը 150 դահեկանի բարձրացած չէ»:

Ներկայ սովը՝ որոյ աւելի ստակալի լինելու երկիւղներ կան և որ պատերազմի ժամանակ (մեր երկրի միակ երկրագործ եղող) հայուն վերայ ի դարձ դրուած բազմաժողով հարստահարութեանց հետեւանքն է, կը վախճուի որ յաջորդ տարին ալ շարունակուի, զի հարստահարիչ քիւրտը՝ առանց երբէք նախատեսելու՝ չարաչար կը հարստահարէ երկրագործ հայը, կը յափշտակէ նախա եղն ու գոմէն, սայլն և գոթանն, կը կողպատէ նորա ցորեանը, զրկելով նորա դաւանները ոգեպահիկէն, առանց թող տարու մի ափ ցորեան, որպէս զի հարստահարեալ երկրագործը իւր արտերուն մէջը ցանէ, կը մերկայնէ արտին մէջը աշխատող երկրագործը և վերջապէս թշուառ գիւղացին ձեռքէն խլելով նորա երկրագործական գործիները և նորա արտաւարքով թրջեալ չորաբեկ հացը, գաղթելու կտուպէնց զայն, գաղթել ուր, անդ ուր մի պատառ հաց կարող են գտնել:

Երեւակայէ, ընթերցող, երկու տղերք, ձեռքերնին բռնած գաւազան մը, ուսերնին ձգած մախաղ մը, որոց տոբոյն դէմքը, ախօսացեալ աչքերը տեսնողը գերեզմանէն ելած հրէշ մը պիտի կարծէ անտառակոյն, նոցա ետեւէն հինգ վեց կիսամերկ կնիկները, որոց երկաւասարդ և ձերք իրարմէ դառելը շատ դժուար է, և որոց շատերը իւրաքանչիւր մի երակայ ընդգրկած կամշալակած են, նոցա հետ տափի մը չափ տղայներ, մեծ և փոքր, մանչ և աղջիկ, որք իրենց մայրք ետեւ կը վաղվաւան, բոլորովին մերկ գրեթէ և որոց ամօթըն իսկ ծածկուած չեն, կերթան, հարցուր թէ ո՞ւր, «անդ», կը պատասխանեն, ուր պիտի կրնամք մեզ չորարեկ հաց մը գտնել և անօթի մեռնիլ»: Ահա զայս երեւակայ յաճող միջոցին՝ որչափ ծխուր զգացում մը ունեցար, հարկերապատիկ տխուր զգացում մը պիտի ունենաս

երբ աչօքդ տեսնես այս թշուառ գաղթականաց տխուր տեսարանը, որոց պիտի հանդիպիս և ոչ մի ժամ չանցուցած:

Ահա այս իրարու վրայ բարդուած ամեն պարագայները ցոյց կը տան թէ սովը մեր երկրի մէջը մեծ գեր մը ունի խաղալիք և շատ ստակալի պիտի լինի նորա խաղացած գերը:

Գ. Գաւառական Երեսօխոսանական ժողովոյ Ա. նիստը ամսոյս 20/2 ին դումարեցաւ վերջապէս:

Նախագահ Սրբազանը ժողովոյ բացման առթիւ մի նախագահական ճառ արտասանեց: Որովհետեւ ժողովոյ դումարումը տեղը եկեղեցիի մէջ էր, և նախագահ Սրբազանի գահը ճիշդ նոյն բեմին վրայ էր, յորմէ քարոզիչներ ժողովուրդեան քարոզ կը խօսին, թեքս Սրբազան նախագահն ալ կարծեց թէ վատուրականի երեսօխոսանները եկեղեցիի մէջը աղօթելու և իւր քարոզները լսելու նպատակաւ հաւաքուած ժողովուրդ մէջ, որովհետեւ իւր արտասանած ճառը սղութեան քարոզէ մը երբէք տարբերութիւն չուներ: Վերջապէս Մովսէսը իրեն խորհրդակցի և դործակից 72 ձերբ ընտանք, ըսաւ, «Իրիստալ 12 Առաքեալներ և 72 աշակերաններ, ես ալ զԶեղ ընտանքը» որպէս զի գլխաւորաբար Հայկական խնդրոյն և հարստահարութեանց բարձման համար ինծի խորհրդակցի և դործակից լինիք:

Նախագահ Սրբազանի ճառին աւարտումէն վերջը, զոր ամեն ոք անհամբեր կը փափաքէր, Ա. դիւաւնը կազմուեցաւ հետեւեալ յառաջագիմական անձերէ:

Ա. Առնապետ Խորէն Եփէնտի Խորիմեան. Ա. Առնապետի Հայրապետ Եփէնտի Ճանիկեան:

Թափու

Հայէպ գանուող պանդուխտ աղքատները հետեւեալ աղքատներն ուղղած են մեծ տէրութեանց դեռ պանդուխտն:

Ա. Ասեմ. Դեռապան վեց մեծ տէրութեանց:

Ա. Ասեմ. Դեռապան մեծին Բրիտանիոյ:

Ստորագրեալ պանդուխտ արհեստաւորք ի Հալպ, բնիկ ծաղմամբ ի գաւառացի Սասնոյ, Մշոյ, Վանայ, Արաբկերու, Չմիկանդու և Եւ, կը համար ծախելով աղքատը գործատուներէ ներկայացուցիչս վեհապետացի Եւրոպոյ, որ արդէն Հայոց կենցաղի մասին քաջածանօթ էր, որք Բիւրդ լինումներու արտաքին հալածանքներէն ճշուելով, շատ մը ժառանգական բնակութիւններէն արտաքսեալ, միմեանց օգնելու յաւով խիտ առ խիտ բնակելու ստիպուած են ի կեդրոնաւոր, բայց զարձեւող նոցա վայրացի կացութիւններէն վրէժ, տառապանք, զրկանք, հարստահարութեանց կրկնով, օրապահիկներին հայկալեւի համար ժամանակ մը մինչև ցարդ օտար երկրներու մէջ չարաչար ստրկութեամբ կաշխատիմ, նկատելով որ ի շնորհ Վեհապետացի Եւրոպոյ մարդկային իրաւունք անխնայապէս կը պաշտպանուին ընդ որ և Հայաստան ալ յիշողութեան տակ առնելով բարեկորդութիւններ խնայաքաւ, և տարբին աւելի է որ կ'սպասեմք արդիւնք մը վայելելու, մի միայն մի քանի Բոմբէրներ՝ Տիգրանակերտու, Վանայ, Մշոյ, և Տէրափի մէջ հարեանցի ձեռակերպութիւններ ընելով հետանալուն ոչ ոք դարձեալ նոյն վայրերի Բրդերն տնդը քան զառաջ հարստահարութիւններն շարունակելին աւարտայ թղթակցութեամբ կիսանամք և Տիգրանակերտու տարադիր վճռուած մի քանի Բիւրդ պէյերն ալ տակաւին Հալպ են, և ի

բնեց հայրենիքը վերադառնալու յաւով կ'սպասեն: Արդ զրկեալք ի հայրենաւան սեփականութենէ՝ պանդուխտութեան անտանելի լուծէն աղատելու վերջաւան յաւով կը դիմենք առ վճռատ մարդասիրութիւն Չերք Վեհապետացի պաշտօն և հոգածու հանդիսանալ այն շտապներու աղետադրոյս անտանելի կացութեանց, որոց տեսակաց և տեղեաց եւ եւ մարմանս յիշատակագրերը հետզհետէ ներկայացնելու պատիւն պիտի ունենամք:

2000 Ստորագրութեան:

Կ. Պօլիս 1879 Նոյ. 7

Խմբագիր,

Պէշիկիթաշի Ուսումնասիրաց Օժտնագալ ընկերութիւնը նուիրեց Եւրոպայի նորահաստատ Մեծին Ներսէսի գիւղերովի վարժարանին 20 Գործնական Գերականութիւն Գարադաշ 10 Գերականութիւն ընդարձակ Գարադաշ և 23 ընթերցարան Առանձար, որով իրաւունք կուտայ յաւով թէ ինքն ևս պիտի գտնէ այն օժանդակութիւնը զոր չնայեալ ազգն անրիմ ճակատներու:

Ի Դիմաց Տնօրէնութեան Մեծին Ներսիսի Գիւղերովի վարժ. երկրայի Պէշիկիթաշ:

Կ. Պօլիս 7/19 Նոյ. 1879 Օրթաքէոյ

Ազնիւ Բնիկ,

Նորակալ Արուեստաւոր ընկերութեան վարիչ ժողովն պատիւ ունի ծանուցանել որ յառաջիկայ կիւրակէ օր, 11 Նոյ. Բնիկութեան Բնագանութիւն վրայի գումարի յարտաքայ կարգի նիստ ի Ս. Թարգմանչաց վարժարան ժամը ճիշդ ճին:

Կը հրաւիրուի Չերք Ազնուութիւնը իւր ընկերական պարտաւորութիւնը կատարելու փութալ:

Ի Դիմաց վարիչ ժողովոյ Առնապետի Առնապետ Տ. Արքեպիս Բ. Գարգէն:

Վ. Բ. Պ. Ա. Կ.

Պարզապէս Հայոց հեռաց ընկերութեան նամակին մէջ զոր մեր հինգ չարթի աւուր թերթով հրատարակած էինք, քանի մը ապաղլուկան պիտիներ սարգած են:

Յիշեալ նամակին երկրորդ սխառկին չորրորդ պարբերութեան առաջին տողին մէջ «թիւրաղաց» բառը պէտք է կարդալ «գիւրաղաց»:

Նամակագրէ հինգ երրորդ պարբերութեան երկրորդ տողին մէջ «պարտք» բառը «նպատակ» և եօթներորդ պարբերութեան վերջնական տողին մէջ «աննախանձի» բառը «նախանձի» պիտի կարդացուի:

Ե. Չ. Գ.

Թ. ՅՏՐՈՆ ՕՍՄԱՆԵԱՆ

Ի ԿԵՏԻԿ-ՓԱՇԱ

Յառաջիկայ շարքով իրիկուն նոյն յետեր 10 Պ. Ս. Թղլեանի հաշոյն պիտի ներկայացուի իւր հեղինակած և բարեխօսած ԿՈՅՐ ՏԻՐԱՆ անուն թատերադրութիւնը Պ. Ս. Թղլեանի թէ՛ դատաւարութեամբ և թէ՛ դրական աշխատութեամբ Աղլին մատուցած ծառայութիւնը ծանօթ են ամենուն. աւտի յաւաքի է որ Աղլին ալ այս պարագային մէջ կը վարձատրէ իւր յառաջգիմութեան ժիւր մշակներէն մին:

* Գիւղերովի վարժարանն արդէն յայտնի է որ Արթ. Հայեան վարդապետի ջանքի քն հաստատուած է:

* Այսինքն կեղեքման գործակալը: Յիշեալ կաթողիկոսին գործօց և ընթացից վրայ ծանր դանդաղութիւն գրուած են մեզ, զանգատներ, որոց ճշգրտութիւնն ստուգելու ետեւ ենք, որովհետեւ խիտ տխուր դադարած մը կուտան յիշեալ կաթողիկոսին վրայ, և մինչև ի պաշտօնան կաթիւն կրնան հասնել զայն: Մ. Յ.

